Հրաման-հրովարտակ է ամրագրվում նաև Մահմադ բեկի ու հրեա պատվիրակների երկխոսության մեջ. «Դուք ամենայն ազգդ Եբրայեցւոց պարտիք ելանել ի քաղաքամիջէ աստի և գնալ արտաքոյ քաղաքիս բնակեսջիք» (էջ 357):

Երկխոսություններում վկայագրվում են նաև պայմանագրեր: Կողմերը երկխոսություն-բանակցության ընթացքում հասնում են որոշակի հանգրվանային վիճակի, և դրա՝ մինչփաստաթղթային ամրագրումը իրականացվում է բանավոր կերպով: Շահ-Աբասի և հայոց մելիքների մի զրույցում շահի խոսքն իրենից պայմանագիր է ներկայացնում: Ահա մի բնորոշ հատված. «Արդ՝ ամենայն ոք ի ձէնջ, որ ոք և առցէ ի թագաւորական գանձէս, յորժամ բերցէ զառեալ գանձն՝ և վճարեսցէ ի գանձարանս թագաւորին, եղիցի ազատ... և այլն» (էջ 148): Հետաքրքիրն այն է, որ այսպիսի դեպքերում Դավրիժեցին չի էլ անդրադառնում՝ այդ պայմանագիրը փաստաթղթի տեսք ստացա՞վ, թե՞ ոչ:

Բացի թղթային միավորներից, երկխոսություններում կարող են դրսևորվել նաև պատկերավորման այնպիսի միավորներ, ինչպիսին, օրինակ, դիմանկարն է: Իրենց խոսակցությունում զրուցակիցները, անդրադառնալով որևէ երրորդ անձնավորության, երբեմն հարկ են համարում հանգամանորեն ներկայացնել նրան, և կախված հանգամանքներից՝ ստացվում է կամ հոգևոր, կամ մարմնական դիմանկար: Ահա այդպես գավառապետի ու Շահ-Աբասի երկխոսության մեջ ներկայացվում է վրաց Լավասափ թագավորի քրոջ դիմանկարը. «Է Լաւասափին քոյր մի թագաւորազն, նորահաս կոյս չքնաղագեղ և գեղեցկատեսիլ, և ամենայն որպիսութեամբ վայելուչ» (էջ 124):

Երկխոսություններն էլ ունեն իրենց յուրօրինակ ավարտաբանությունները, որոնցով եզրափակվում է խոսակցությունը: Ուշարժան է, որ Դավրիժեցու պատմագրքում, եթե զրուցում են հայն ու պարսիկը, ապա խոսակցությունը եզրափակողն անպայման երկրորդն է: Երկխոսություններում դրսևորվող ավարտաբանություն-